

Պայմանագրի շնորհման տեղեկատվություն
(Միջազգային բաց մրցույթ)

Ծրագրի անուն՝ «Թալին-Գյումրի Մ1 ճանապարհի վերակառուցում և բարելավում 90+200 կմ-ից մինչև 117+670 կմ (Լանջիկ-Գյումրի հատված)»
Երկիր՝ Հայաստանի Հանրապետություն
Պայմանագրի համար՝ T3-CW-02
Վարկի համար՝ ԵՆԴ վարկ N FI N 82.634 AM
Հայտի/Պայմանագրի No՝ ՄԲՄ No՝ T3-CW-02
Պայմանագրի անուն՝ «Թալին-Գյումրի Մ1 ճանապարհի վերակառուցում և բարելավում 90+200 կմ-ից մինչև 117+670 կմ (Լանջիկ-Գյումրի հատված)»
Պայմանագրի տևողություն՝ 1096 օր
Արժույթ՝ Եվրո
ՄԲՄ N՝ T3-CW-02

1. Ստացված առաջարկների թիվը՝

- ա. Սինտիդրո Քորփորեյշն ՍՊԸ
- բ. «Զինջիանգ Բիքսին Ռոուդ անդ Բրիջ Գրուպ» ՍՊԸ
- գ. «Չայնա Ցիվիլ Էնջինիերինգ Քոնսթրաքշն Քորփորեյշն»
- դ. «Կորսան-Կորվիամ Կոնստրուկսիոն» Ս.Ա.
- ե.. «Իտիներա Ս. Պ. Ա. և Ռենկո Ս. Պ. Ա.» ՀԶ

2. Գնահատված հայտատուներ

- ա) «Իտիներա Ս. Պ. Ա. և Ռենկո Ս. Պ. Ա.» ՀԶ
- բ) Սինտիդրո Քորփորեյշն ՍՊԸ

3. Շնորհված հայտատուներ

Անուն՝ Սինտիդրո Քորփորեյշն ՍՊԸ
Ընդունելի պայմանագրի գումար՝ 74,066,179.92 Եվրո (ներառյալ ԱԱՀ)

4. Մերժված հայտատուներ

ա) Անուն՝ «Զինջիանգ Բիքսին Ռոուդ անդ Բրիջ Գրուպ» ՍՊԸ

Մերժման պատճառները՝

- ա. Այս հայտատուն չի բավարարել Բաժին 3-ի 2.4.1 կետով սահմանված «Նմանատիպ ծավալների և բովանդակության պայմանագրեր» չափանիշը, քանի որ ներկայացված 57.600.000 ԱՄՆ դոլարը գերազանցող պայմանագրերից ոչ մեկի շրջանակներում չի իրականացվել ցեմենտ-բետոնե ճանապարհային ծածկի աշխատանքներ և համաձայն կցված հավաստող փաստաթղթերի՝ ճանապարհային ծածկը 57.600.000 ԱՄՆ դոլարը գերազանցող բոլոր պայմանագրերի շրջանակներում նախատեսված է փտումային (ասֆալտ) բետոնից։
- բ. Հայտատուն չի բավարարել նաև «Հիմնական գործունեությունների մեջ շինարարական փորձը» չափանիշով սահմանված ցեմենտ բետոնե ճանապարհային ծածկի իրականացման

փորձառությանը ներկայացված պահանջին (Մրցութային փաստաթղթեր, Բաժին 3, 2.4.2), քանի

որ ներկայացված պայմանագրերի հավաստող փաստաթղթերի համաձայն ոչ մի պայմանագրի շրջանակներում իրականացված ցեմենտ բետոնե աշխատանքները չեն հանդիսանում ճանապարհային ծածկի աշխատանքներ:

բ) Անուն՝ ՉԱՅՆԱ ՍԻՎԻԼ ԷՆՋԻՆԵՐԻՆԳ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ ՔՈՐՓՈՐԵՅՇՆ

Մերժման պատճառներ՝

ա. Հայտատուն չի բավարարել մրցութային փաստաթղթերի Բաժին 3-ով սահմանված որակավորման որոշ պահանջներին, հայտնաբերվել է անհամապատասխանություն ներկայացված պայմանագրում, որը հանդիսանում է կազմակերպության նմանատիպ շինարարական փորձը հավաստող միակ պայմանագիրը (համաձայն Բաժին 3-ի պահանջների), ինչպես նաև ցեմենտ բետոնե ծածկի իրականացման աշխատանքները չեն իրականացվել Հայտատուի կողմից, այլ իրականացվել է առաջարկվող մասնագիտացված ենթակապալառուի կողմից և ոչ թե ՀՁ-ի որևէ գործընկերոջ կողմից:

բ. Հաշվի առնելով, որ ցեմենտ բետոնե ծածկի իրականացման աշխատանքները չեն հանդիսանում բարձր մասնագիտացված գործընթացներ, այլ հանդիսանում են առանցքային կարևորության աշխատանքներ, որը սահմանվել է Բաժին 3-ի 2.4.2 կետով, ապա մասնագիտացված ենթակապալառուի կողմից ցեմենտ բետոնե ճանապարհային ծածկի աշխատանքների կատարման փորձը չի կարող դիտարկվել որպես Չայնա Սիվիլ Էնջիներինգ Քոնսթրաքշն Քորփորեյշն-ի փորձառություն:

գ) Անուն՝ Կորսան-Կորվիամ Կոնստրուկսիոն Ս.Ա

Մերժման պատճառներ՝

ա. Մրցութային փաստաթղթերի ITB 19.3 կետի և Հարցեր/Պատասխանների 5-րդ կետի պահանջների համաձայն Հայտի ապահովումը՝ բանկային երաշխիքի ձևով պետք է ներկայացվեր այն բանկի կողմից, որն ունի առնվազն “BBB-” վարկանիշ՝ համաձայն Standard & Poor’s կամ համարժեք գնահատման:

Հաշվի առնելով վերոնշյալը և այն փաստը, որ Կորսան-Կորվիամ Կոնստրուկսիոն Ս.Ա.-ի կողմից ներկայացված հայտային երաշխիքը թողարկվել է Սաբադել Բանկի կողմից (Իսպանիա), որն ունի Standard & Poor’s is “BB+” վարկանիշ, այն ավելի քիչ է, քան պահանջվող վարկանիշը:

բ. Կորսան-Կորվիամ Կոնստրուկսիոն Ս.Ա.-ի կողմից լաբորատոր սարքավորումների համար կնքված նախնական համաձայնագրում ներկայացված սարքավորումների ցանկը չի համապատասխանում տեխնիկական մասնագրի պահանջներին, բացակայում են մի շարք պահանջված սարքավորումների, ինչպես նաև ներկայացված սարքավորումների մեծ մասի մոդելների, արտադրման տարեթվերի, գտնվելու վայրի և Հայաստան տեղափոխելու ժամկետների վերաբերյալ տեղեկատվությունը: